Պարույր Սևակ

Չթչթանը

Մի օր ասաց Ստեղծողը
Իր ստեղծած թռչուններին.
«Ձեզնից ով շուտ այս տեղը գա,
Նա կդառնա ինձ տեղակալ
Կամ թագավոր թռչունների»:
Ստեղծողի կոչի վրա
Արծիվն իսկույն վեր է թռչում
Եվ չի զգում, որ մի թռչուն
Նստել է իր պոչի վրա,
Տեղ չհասած՝հոգնում է նա
Ու նստում, որ հանգստանա:
Այդ ժամանակ արծվի պոչից
Շուտ պոկվում է ու թռչում է
Խեղճ ու պուճուր այն թռչունը,
Արծվից առաջ տեղ է հասնում,
Եվ կանչողի առջև բուսնում:
Իսկ կանչողն էլ աչքով տեսնում,
Չի հավատում իր տեսածին.
«Ի՞նչ ես ուզում, ասա՛ ինձ, ծի՛տ»:
«Ես քո կանչով այստեղ եկա,
Որ ինձ դարձնես քեզ տեղակալ

Կամ թագավոր թռչունների»:
Չթչթում է թռչունն էլի,
Չթչթում է և սպասում:
Միտք է անում Ստեղծողը
Քիթն է քորում, քորում կողը
Եվ ժպտալով հանգիստ ասում.
«Այ դու ապրե՛ս, որ այդպես է,
Գնա ընկիր դեն ու դեսը
Եվ այնպիսի ճիպոտ բեր ինձ,
Որ ո՛չ ուղիղ, ո՛չ ծուռ լինի,
Ո՛չ մեծ, ո՛չ էլ պուճուր լինի»:
__Այդ օրվանից փոքրիկ ծիտը
Մտցընում է իր սուր քիթը
Ամեն տեսակ ցանկապատի
Ու թփի տակ՝ ի՞նչ է պիտի
Մի այնպիսի՛ ճիպոտ գտնի,
Որ ո՛չ ուղիղ, ո՛չ էլ ծուռ է,
Որ ո՛չ մեծ է, ո՛չ պուճուր է:
Երբ տեսնում է մի նոր ճիպոտ,
Կանգ է առնում ճիպոտի մոտ
Եվ ասում է. «Չէ, չէ, դա չէ՛,
Չէ՛, դա չէ՛, դա չէ՛, դա չէ՛, դա...»
Ու կոչվում է նա...Չթչթան: